

թիւերը նոյն օրուան վերադառնալու եւ կրկնուելու համար 1460 տարի կը պահանջեն:

ՇԼԲ կանոնները պատրաստող հայ տոմարագէտներու գլխաց կային ոչ-տոմարագէտներ ալ, որոնք չէին կրցած հասկընալ հայկական նահանջին իմաստը: «Տիեզերագիրութիւն եւ տոմար»-ի հեղինակը կ'ըսէ արդէն. «Հայկական նահանջը ծածուկ իրականութիւն մ'ըլլալուն համար՝ պարզամիտները կը խաբուին»²⁷:

Ոչ-տոմարագէտները՝ հայկական թուականը կը սկսէին ոչ թէ քրիստոնէական թուականի 553ի Յունուար 1ով եւ Յայտնութեամբ, այլ 552ի Նաւասարդին՝ որ կը զուգահեռէր նոյն տարուան Յուլիս 11ին: Այս դործով, անոնք՝ տոմարագէտներու թիւ Ա. տարուան մէջ կ'առնէին 174 օրեր, Յուլիս 11էն մինչեւ Դեկտեմբեր 31: Նկատի չէին առնել նաեւ Հայոց թուականի նահանջները, եւ հետեւաբար տարիները միշտ կը փակուէին 365 օրով: Հայոց Մեծ թուականի ընթացքին՝ անոնք զուգէ երբեք չէին անդրադարձած որ իրենց արարքը չէր համապատասխաներ զիտնականներու ըմբռնումին: Ուստի, երբ ՇԼԲ կանոնի օրացոյցները վերջացան՝ Մեծ թուի 532ին, իրենք շփոթութեան սահմանները մտած էին արդէն, որովհետեւ զայն 533 կ'անուանէին, երբ իրականին մէջ տակաւին 532ի մէջն էին՝ լուսինով եւ Զատիկով:

Հանրաձայնօթ է որ տոմարական հաշիւները տարեթիւի վրայ կը հիմնուին եւ եթէ սխալ է տարեթիւը, կը սխալին լուսինի եւ կիրակիներու թուականները, եւ անկարելի կը դառնայ օրացոյց պատրաստելը:

Հայ մատենագրութեան մէջ, Յովհաննէս Սարկաւազ իմաստասէր առաջին տոմարագէտն է, որ կը մատնանչէ յառաջացած տարիին հետեւանքով եղած սխալներն ու շփոթութիւնը: Այս նիւթին շուրջ, անոր միաբեր եւ դատաստանները ամփոփելէ առաջ, դէմ գլխաց բերենք Անանիա Շիրակացիի 532 եւ ոչ-տոմարական 533ի օրացոյցները, տեսնելու համար

անոնց զուգընթացութիւնը եւ տարբերութիւնը (տե՛ս հանդիպակաց էջը):

532ի տոմարական եւ ոչ-տոմարական օրացոյցները պատրաստելու համար՝ իբր հիմնական տուեալներ կը գործածենք Անանիա Շիրակացիի կանոնական օրերը. «Յայտնութիւն՝ Մարգար 12 = Յունուար 6, օրը՝ Շաբաթ. լրումն զատիկական լուսնի՝ Նաւասարդ 26 = Մարտ 25, օրը՝ երկուշաբթի. Զատիկ՝ Հոռի 2 = Մարտ 31, օրը՝ կիրակի:

Հայկական թուականի այս զոյգ օրացոյցներէն յայտնի կը տեսնուի, որ հայոց փոքր թուականի սկզբնաւորութեան՝ դոյութիւն ունէին երկու տարբեր տեսակէտներով եւ ըմբռնումով կազմուած տարիներ մէկը տոմարական հաստնութեամբ պատրաստուած, եւ միւսը զուգէ անդիտակցաբար դոյացած՝ տոմարական տարիին սխալ գործածութենէն:

Յովհաննէս Սարկաւազ իմաստասէր, որ մեր մատենագրութեան մէջ առաջիմ առաջին մատնանչողն է հայոց թուականին մէջ աւելի թիւին, այսինքն՝ յառաջացած տարիին, երբեք նկատի չէ առած Մեծ թուականի հայ ամսաթիւերով պատրաստուած տոմարական տարիին ներքին կազմը, որ Յունական տարիին վրայ չափուած էր, եւ տարեթիւ աւելցնելու հնարաւորութիւն չունէր, ինչպէս տեսանք նախընթաց էջերուն մէջ: Սակայն, հայ ամսաթիւերուն շարժուն երեւոյթը անթիւ տուած էր՝ որ «պարզամիտ»ները Մեծ թուականին վրայ թիւ աւելցնէին. ասոնք բացարձակ մեծամասնութիւն էին Սարկաւազ վարդապետի օրով, ա՛յնքան՝ որ իրեն համար հայկական տոմարը՝ աւելի թիւ ունեցող, յառաջացած եւ սխալ թուականն է, որուն պատճառը ինք կը գտնէ Անանիա Շիրակացիի հայ ամսանուններու ՇԼԲ բոլորակի կանոնին մէջ. «Երբ այն անարուեստ, այսինքն՝ տոմարագիրութենէ զուրկ, օրինակը հաստատուեցաւ, կ'ըսուի թէ զարնան զիշերահաւասարը Ահեկի 13ին էր, որ ամսաթիւն

27. Տիեզերագիրութիւն եւ տոմար, էջ 87:

Հայոց 532 տարեթիւի օրացոյցը Անանիա Շիրակացիի կամաճայն				Հայոց 532 տարեթիւին գործածուած ոչ-տոմարական օրացոյցը	
Յունուար 1, Բշ.	= Մարգար 7			Մարգար 7էն մինչեւ Ահեկաց 5 կը զուգընթանայ Հայոց 532 տոմարական տարեթիւի Յունուար 1էն մինչեւ Փետրուար 28ի օրերուն:	
31 օր	= Մարգար 7-30 = 24 օր + Հրոսից 1-7 = 7 օր = 31				
Փետրուար 1, Եշ.	= Հրոսից 8			Նաւասարդ 1 հինգշաբթի = Փետր. 29	
29 օր. նահանջ	= Հրոսից 8-30 = 23 օր + Ահեկաց 1-5 = 5 օր + Նաւասարդ 1 = 1 օր = 29				
Մարտ 1, Ուրբ.	= Նաւասարդ 2			Կը սկսի Հայոց ոչ-տոմարական յառաջացած թուականի 533ը, որ 307 օր կը կանխէ Շիրակացիի եւ Յովհաննէս Սրկ. իմաստասէրի տարեթիւերը, սկսելով Փետրուար 29էն մինչեւ Դեկտեմբեր 31՝ զուգընթաց Մարգար 7ին:	
31 օր	= Նաւասարդ 2-30 = 29 օր + Հոռի 1-2 = 2 օր = 31				
Ապրիլ 1, Բշ.	= Հոռի 3			Յառաջացած տարեթիւի 307 օրերէն 174ը արդէն իսկ կար Հայոց թուականին սկզբնաւորութեան: Մեծ թուականի 532 տարիներու ընթացքին, ոչ-տոմարագէտները՝ նահանջները չըմբռնելով եւ զանոնք գումարելով կ'աւելցնեն 133 օրեր ալ:	
30 օր	= Հոռի 3-30 = 28 օր + Սահմի 1-2 = 2 օր = 30				
Մայիս 1, Դշ.	= Սահմի 3			Հայոց Մեծ թուականի 765ին կ'աւելնան նաեւ 58 նահանջի օրեր. Նաւասարդ 1 եւ Յունուար 1 կը զուգահեռեն եւ Հայոց յառաջացած տարին կ'ունենայ միջանկաւ 365 օրեր, ամբողջական տարի մը:	
31 օր	= Սահմի 3-30 = 28 օր + Տրէ 1-3 = 3 օր = 31				
Յունիս 1, Շրթ.	= Տրէ 4			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
30 օր	= Տրէ 4-30 = 27 օր + Քաղոց 1-3 = 3 օր = 30				
Յուլիս 1, Բշ.	= Քաղոց 4			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
31 օր	= Քաղոց 4-30 = 27 օր + Արաց 1-4 = 4 օր = 31				
Օգոստոս 1, Եշ.	= Արաց 5			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
31 օր	= Արաց 5-30 = 26 օր + Մեհեկան 1-5 = 5 օր = 31				
Սեպտեմբեր 1, Կիր.	= Մեհեկան 6			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
30 օր	= Մեհեկան 6-30 = 25 օր + Արեգ 1-5 = 5 օր = 30				
Հոկտեմբեր 1, Դշ.	= Արեգ 6			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
31 օր	= Արեգ 6-30 = 25 օր + Ահեկան 1-6 = 6 օր = 31				
Նոյեմբեր 1, Ուրբ.	= Ահեկան 7			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
30 օր	= Ահեկան 7-30 = 24 օր + Մարերի 1-6 = 6 օր = 30				
Դեկտեմբեր 1, Կիր.	= Մարերի 7			Յառաջացած թուականի չարթուան օրերը, որպէս զի ճիշտ զուգընթանան տոմարական թուականի չարթուան օրերուն, Յովհաննէս Սրկ. իմաստասէր եւ Յակոբ Ղըրմեցի կ'առաջարկեն որ յառաջացած տարեթիւ գործածողները մէկ թիւ պակսեցնեն անկէ եւ յետոյ ձեռնարկեն տոմարական հաշիւներու. օրինակ 533-1, այսինքն 532ի կիրակնօրեան եւ վերադիրը գործածեն օրացոյց պատրաստելու համար ²⁸ :	
31 օր	= Մարերի 7-30 = 24 օր + Մարգար 1-7 = 7 օր = 31				

28. Որպէս զի չարթուան օրերուն եւ լուսնի փոփոխութեան համաձայնութիւն զայ, ընդմէջ Հայոց յառաջացած եւ Քրիստոնէական թուականներուն, թուականներ, Առձեռն տոմարացոյցներ մէջ, փոխանակ Հայոց յառաջացած տարեթիւները սրբազանելու, տոմարական տարիներու օրերը

երբ եւ լուսնի փոփոխութեան մէկ տարի առաջ կը տանի. այնպէս որ տոմարական 532ի չարթուան օրերը որոշուելու համար, մեր պարագային՝ Նաւասարդ 1 հինգշաբթիէն մինչեւ մարգար 7 երեքշաբթի, պէտք է գործածենք էջ 34 աղիւսակին 533 տարեթիւը:

Հայոց Մեծ Բուսական 533 և փոքր բուսականի Ա. տարուան օրացույցը Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրի համաձայն			
Յայտնութիւն՝ Յունուար 6, Էրկուշարթի. Լրումն զտակական լուսնի՝ Ապրիլ 13, Կիրակի. Չատիկ՝ Ապրիլ 20, Կիրակի:			
Յունուար 1, Դշ.		= Մարդաց 8	Կը շարունակուի Հայոց յառաջացած թուականի 533ը, որուն Մարդաց 8էն մինչեւ Աւելեաց 5ը հիշատակուող զուգահեռ տոմարական թուականի օրերուն:
31 օր		Մարդաց 8-30 = 23 օր	
		+ Հրոտից 1-8 = 8 օր = 31	
Փետրուար 1, Ծրթ.		= Հրոտից 9	
28 օր		Հրոտից 9-30 = 22 օր	
		+ Աւելեաց 1-5 = 5 օր	
		+ Նաւասարդ 1 = 1 օր = 28	
Տոմարական թուականի 533 Փետրուար 28ին, որ զուգահեռացն է Նաւասարդ 1ին, կը սկսի Հայոց 534 յառաջացած տարին:			

լուսն փոփոխութեամբ յաջորդ տարուան Նա-
ւասարդին անցաւ, որմէ մինչեւ մեր օ-
րերը 107 տարի է²⁹ և ոչ ոք կրցաւ հաս-
կընալ՝ ո՛չ զայն առաջին անգամ պա-
տրաստողները, թէ ասիկա պիտի պատա-
հէր տարին վերջանալուն, ո՛չ ալ զայն
ընդունողները զիտացան՝ թէ դուրսէ դուրս
տարի մը մտած էր թուականին մէջ. ո՛չ
ալ անդրադարձան թէ ինչո՞ւ այսպէս և-
զաւ: Եւ եթէ աւելորդ տարիին մասնը
չտեսան, ի՞նչպէս պիտի կարենային
պատճառը քննել³⁰:

Մենք նախընթաց էջերուն մէջ տեսանք
որ Ծիրակացիի պատրաստած հայ ամա-
նուններով օրացույցներու կանոնը, որուն
Ա. տարուան զիշերահաւասարի ամսաթի-
ւը՝ իբր նշան իր ինքնութեան՝ ունէր Ա-
հէկի 13ը, տոմարագէտի ըմբռնութեամբ և
հասունութեամբ կատարուած աշխատանք
է. հետեւաբար, Յովհ. Սրկ. Իմաստասէ-
րի վերի խօսքերը և միւս տոմարական
հակաճառութիւնները իբր հակառակորդ
ունենալու են Հայոց թուականին վրայ
տարեթիւ մը աւելցնող և տոմարական

ուսումնաբերող պարզամիտները, որոնք
կը շարունակէին մնալ իրենց սխալին մէջ:

Շատ խիստ է նաեւ հետեւեալ բացա-
արութիւնը, որ կը յարմարի միայն տը-
գէտներուն «Մեր ազգին անխելութեան
ապացոյցն է ամիսներուն և եղանակնե-
րուն խառնուելը, որ մեզի յատուկ է, և
որով կը զատուինք ամէնքէն. կը դու-
մարենք նահանջները, զոր ուրիշ ազգեր
կը զնեն ամիսներու թիւին վրայ, և մի-
ջանկեալին հետեւանքով՝ չեն շարժիր
ամսաթիւերը, եղանակները որոնք իրենց
կարգը առաջուց առած են³¹:

«Մեծ աղիտութիւն է նահանջի օրերը
ժողովել, զատելով տարուան օրերէն և
ամսաթիւերէն. ոչ մէկ ազգ այդպէս կ'ը-
նէ. որովհետեւ շատ սխալներ կը դու-
րուին ատով. նախ ամիսներու թիւ կ'ա-
ւելնայ և նահանջ տարին՝ մէկ թիւ ա-
ռաջ զալով՝ տոմարական կանոններէ
դուրս կը մնայ, և չփոթութիւն ու սխալ
կը մտնէ եօթներեակներու (շարժուան օ-
րերու) և տասներեակներու (վերա-
դիրներու, այսինքն՝ լուսնի օրերուն)

29. Գարնան զիշերահաւասարը կը սկսի Նաւա-
սարդ 1ին հանդիպել Մեծ թուականի 452ին
(տես ԾԼԲ, Ծիրակացիի Մատենագրութիւնը
էջ 279): Ուստի «Աս Սարգիս» ուղղութեամբ նա-
մակը, որմէ կը թարգմանենք այս տողերը,

Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէր զրաւ է
փոքր թուականի 27ին:

30. Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը,
էջ 262-263:

31. Նոյն, էջ 261:

մէջ, որոնք այլևս չեն համաձայնիր
Հինհարիւրեակի (ԾԼԲ բոլորակի) կա-
նոններուն³²:

Յովհաննէս Սրկ. Իմաստասէրի այս
խօսքերէն կը հետեւի որ հայոց թուակա-
նին վրայ տարի մը աւելցնողները, տո-
մարագիտական ամէն հակալիչով կորսն-
ցուցած էին. և ասիկա ինքնին յայտնի է,
որովհետեւ տարեկան օրացույցներու հիմ-
նական տուեալները, եօթներեակ՝ այս-
ինքն կիրակիներու ամսաթիւերը, և վե-
րագիր՝ այսինքն տարուան լուսնին ծը-
նունդին ամսաթիւերը, կը ճշտուին տա-
րեթիւին բաժանումով և մնացորդով. ե-
թէ տարեթիւը սխալ առնուէր, սխալը կը
մտնէր տարուան օրացույցին մէջ: Յով-
հաննէս Սրկ. Իմաստասէր այս նկատմամբ
կ'ըսէ. «Երբ կը ահեսեն թէ սխալներ կը
պատահին, անկապ և անյարմար բաներ
կը կարկտեն, կը կցեն. և իբրեւ թէ խոր
զիշերուան մէջ ըլլան՝ առանց աչքի, դա-
ւադանով պատէ պատ կը խորխորեն,
անցքեր փնտռելու համար. սակայն միշտ

հետեւ կը մնան ստոյգ տեղեկութիւննե-
րէ, և հանդիպելով վիճերու, փոսերու,
զլորած քարերու՝ կ'իշխան»³³: Յաղաքս
իննեւտաներեակ ամացն զլուսին մէջ ալ
կը յանձնարարէ կանոնով դործածել վե-
րագիրները, որոնք անսխալօրէն ցոյց կու
տան լուսնի ծնունդը, որովհետեւ եթէ
զատկական լրումը զիշերահաւասարէն ա-
ռաջ պատահի՝ տարին կրնայ երկու Չա-
տիկ ունենալ³⁴:

Յովհաննէս Սրկ. Իմաստասէր որպէս զի
կարենար սրբազրել եղած սխալը և վերջ
տալ տոմարական չփոթութիւններու,

1. - Կը պատրաստէ նոր ԾԼԲ բոլորակի
կանոն մը, միայն Յուլեան ամսաթիւե-
րով, և կը յանձնարարէ որ աւելցած՝ ե-
րով, և կը յանձնարարէ որ աւելցած՝ ե-
րով համար, հանեն 533 տարի, փոխանակ
լու համար, հանեն 533 տարի, փոխանակ
532ի, որպէս զի աւելի թիւը միանգամ
ընդ միշտ դուրս մնայ հայոց նոր թուա-
կանէն³⁵:

32. Նոյն, էջ 262:

33. Նոյն, էջ 263:

34. Նոյն, էջ 268:

35. Նոյն, էջ 282:

Դիտողութիւն ա. - Յովհ. Սրկ. Իմաստա-
սէրի ԾԼԲ բոլորակը իբր օրացույց կանոն,
նկատմամբ եօթներեակներու, վերագրեալ
ամսաթիւին և տօներու, յար և նման է Ծե-
րակացիի անուանով մեզի հասած ԾԼԲ բոլորա-
կի Յուլեան կանոնին: Իբրաւ է կը տարբերին
հետեւեալ կէտերուն մէջ.

1. - Յովհ. Սրկ. Իմաստասէր իր ԾԼԲ օրե-
նակին մէջ չէ ընդունած Ծիրակացիի հնգա-
կին, Յայտնութեան և Հասարակին՝ այսինքն
զիշերահաւասարի՝ ամսաթիւերուն և լուսնի
լրումի զիշերուան և ցերեկուան ժամին սիւ-
նակները: Առանց փոխարէն իր բոլորակին մէջ
զրաւ է Տանուտէրի և Առաջաւորի, Պենտե-
կոստէի, Վարդապետի ամսաթիւերուն սիւ-
նակները:

Այս տարբերութիւնը իրաւացի և հասկնալի
է. որովհետեւ Ծիրակացիի անհրաժեշտօրէն
պէտք ունէր Յայտնութեան և զիշերահաւա-
սարի Յուլեան անշարժ տոմարի ամսաթիւին
և օրուան սինակներուն. որպէս զի անոնց
զիմաց զնէր Հայոց շարժուն տոմարին ամսա-
թիւերը և օրերը: Սարկաւազի համար այս

անհրաժեշտութիւնը գոյութիւն չունէր, ո-
րովհետեւ ինք զանց կ'ընէ Հայոց շարժուն
տոմարը, զայն անուանելով «անարուեստ
պատճէն» և ազդիւր տոմարական բոլոր սը-
խալումներու:

2. - Յովհ. Սրկ. Իմաստասէր փոխած է իր
բոլորակի վերագրեալներուն կարգը: Ծիրակա-
ցիի առաջին վերագրին է Լ = 30ը, մինչ ի-
մաստասէրի առաջին վերագրին է Բ = 2ը:
Այս փոփոխութեան կամ սրբազրութեան ի-
մաստք առ այժմ ինքի հասկնալի չէ. որով-
հետեւ նոր վերագրեալները զետեղուած են հին
վերագրեալներու ամսաթիւերուն զիմաց և հե-
տեւաբար պահած են Ծիրակացիի վերագրեա-
լուն միակ թիւութիւնը եղող չորս ծաղա-
տիկները:

Դիտողութիւն բ. - Պէտք է զգուշութեամբ
զործածել Հայոց Մեծ թուականէն Փոքրին
անցնելու համար, 533 հանելու այս պատուէ-
րը: Որովհետեւ Հայոց Փոքր թուականը կան-
խող տարեթիւերէն ոմանք յառաջացած են և
հետեւաբար 533 պէտք է հանել, Մեծէն Փո-
քրին անցնելու համար: Մինչ ուրիշներ Ծիրա-
կացիի տոմարական կանոնին կը հետեւին, ա-
ւելի թիւ չեն պարունակեր և հետեւաբար
Մեծէն Փոքրին անցնելու համար պէտք է հա-
նել 532:

2. - Կորոշել որ հայ ամսաթիվները հաստատուն ընթացք ունենան, նման Յուլիանին, եւ Նաւասարդ 1ը անշարժօրէն կը կապէ Օգոստոս 11ին:

3. - Կը սահմանէ որ նահանջի օրը դրուի Փետրուար 29ի դիմաց: Այս կանոնը կը պտնենք նաեւ «Տիեզերագիտութիւն եւ տոմար»ի մէջ, զլ. ՀԸ. էջ 88:

4. - Տարբերելով Շիրակացիէն, հայ ամսաթիվներով ՇԼԲ բոլորակի կանոն չի պատրաստեր, խառնախորաններու մէջն ալ տարին կը կանոնաւորէ Յուլեան աւմիսներու կարգով. հայ ամսաթիվներուն կու տայ չորրորդ տեղը եւ ծանօթութիւններու շարքին կը դնէ հայ ամսանունները՝ իր սահմանած կարգով³⁶: Խառնախորաններու օրինակներուն մէջ Յունուար 6ի դիմաց յիշատակուած են նաեւ հայոց շարժուն ամսաթիվները, որոնք Յովհաննէս Սրկ. իմաստասէրի չըջանին չեն պատկանիր, այլ խառնախորաններու օրինակութեան տարին ցոյց կու տան: Օրինակ. «Յայտնութիւն Քրիստոսի ի մեծ Հոռի ԺԱ. օրն է շարաթ եւ մկրտութեան օրն կիրակի»³⁷: Յայտնութիւն Տեառն Հոռի Ժ. եւ օրն է շարաթ եւ մկրտութեան օրն կիրակի»³⁸: Այս մէջբերութիւններէն առաջինը օրինակութիւն է հայոց 907 թուին. իսկ երկրորդը՝ հայոց 901 թուին:

Յակոբ Ղըրմեցիին օրով՝ 1408ին, շատ էին յառաջացած թուական գործածողները, որոնց ինք կը յիշեցնէ Սարկաւազ Վ.ի բարենորոգումները. կ'առաջարկէ ջնջել յառաջացած թիւը եւ կամ տոմարական հաշիւներու մէջ՝ մէկ թիւ պակսեցնել տարեթիւէն, որպէս զի տարուան վերադիրը եւ եօթներեակը ուղիղ գայ³⁹:

* * *

Յարզ ըստածներէն կը հետեւի որ հայոց թուականի գործածութեան պատմութիւնը մեր առջեւ դանազան երեւոյթներ կը պարզէ, որոնց գլխաւորները երեք են.

Առաջին երեւոյթը տոմարագէտներու գործածած կանոնական թուականն է. այս թուականին ամբողջական շարքը 1էն մինչեւ 1064 կը գտնուի Անանիա Շիրակացիի

եւ Սարկաւազ Վ.ի անուններով մեղի հասած ՇԼԲ բոլորակներուն մէջ, ուր հայոց եւ քրիստոնէական տարեթիվներուն միջեւ եղած զուգընթացութեան կապը միշտ պահած է 552 տարուան տարբերութիւն:

Երկրորդ երեւոյթը տոմարագիտական հիմք չունի. անգիտակցարար գոյացած է՝ հայ ամսանուններով պատրաստուած օրացոյցներու սխալ գործածութենէն. որուն հետեւանքով, տարեթիւը մէկ թիւ առաջ դացած եւ բաժնուած է իրեն յատուկ օրացոյցէն՝ լուսինի օրերէն եւ կիրակիներէն: Յովհաննէս Սրկ. իմաստասէրի օրով, երբ ժողովրդական գործածութիւնը տարին կ'անուանէր 533, իրականին մէջ նոյն տարուան օրացոյցի օրերը ցոյց կու տային 532ի՝ հայոց տոմարական տարեթիւին լուսինը եւ կիրակիները:

Այս երեւոյթին համաձայն՝ տարեկան օրացոյցներու լուսինը եւ կիրակիները քրիստոնէական թուականի օրացոյցներուն հետ կը զուգընթանան 552 տարուան տարբերութեամբ. իսկ տարեթիւի անուանակոչումը յառաջացած ըլլալուն համար, տարիներու զուգընթացութեան կապը տարաժամօրէն կ'իջնէ 551 տարիի. որովհետեւ այս դրութեամբ,

1. - Քրիստոնէական եւ հայոց յառաջացած թուականին պատկանող տարեթիւները, որոնք իբր զուգընթաց դէմ դիմաց կու գան, նոյն օրացոյցը չունին, կը տարբերին կիրակիներու եւ լուսինի ծրնունդներու ամսաթիվներով:

2. - Չորս եւ հինգ տարին անգամ մը՝ նահանջ եւ պարզ տարիներ իրարու կը հանդիպին իբր զուգընթացներ. օրինակ՝ հայոց յառաջացած Ա տարին գրուած է Քրիստոնէական 552ի նահանջին դիմաց. եւ Քրիստոնէական 555ին դիմաց, որ պարզ տարի է, կու գայ հայոց յառաջացած Դ տարին, որ իբր տարեթիւ՝ նահանջ

36. Նոյն, էջ 160-183:

37. Նոյն, էջ 161:

38. Նոյն, էջ 70:

39. Նոյն, էջ 294-298:

է, իսկ իբր իրականութիւն՝ պարզ տարի է:

Անշուշտ մեր հայ տոմարագէտները չէին կրնար նման բան մը մտածել եւ անգրագաւորալէ ետք՝ հանդուրժել յառաջացած տարիին գոյութեան:

3. - Առիթ կու տայ նոր սխալի մը՝ պատմական եւ տոմարական ապաժամութեան մը, երկդիմութեան մը, որով Շիրակացիի եւ իմաստասէրի ՇԼԲ բոլորակներու օրացոյցները կը փոխեն իրենց տարեթիւը. օրինակ.՝ հայոց 533ի օրերը, որոնք ճշտուած են Մեծ եւ Փոքր թուականի Յուլեան Ա. տարիով (տես Շիրակացիի եւ իմաստասէրի ՇԼԲ կանոնները), թումանեանի Առձեռն տոմարացոյցին մէջ եղած են 534ի օրերը:

Երրորդ երեւոյթն է Սարկաւազադերը, որ հայ ամսաթիվներուն հաստատուն օրեր կու տայ, Նաւասարդ 1ը անշարժօրէն կա-

պելով Յուլեան տոմարէ Օգոստոս 11ին: Սարկաւազադերին եւ քրիստոնէական թուականի զուգընթացութիւնը 552 տարուան տարբերութեան վրայ է:

Հայոց թուականի պատմութեան այս երեք երեւոյթներուն վրայ կրնանք աւելցնել նաեւ չորրորդ մը, այն տարեթիւեցնել համար՝ որոնց մեկնութիւնը եւ քրիստոնէականին հետ զուգընթացութեան պայմանները պատմական յատուկ տեղեկութիւններու կը կարօտին:

Այժմ պիտի ջանանք այս չորս երեւոյթներուն տակ խմբել պատմական թուականներ կամ յիշատակարաններ, եւ ճշդ տեղ դանոնք՝ բնական երեւոյթներու պատմութեամբ եւ տոմարական սկզբունքներով:

(Շար. 2)

Հ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԴԱՄԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՎՐԴ.Ի ԱՍՈՐԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱԻԹԻ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 7-8, էջ 168)

Բ.

ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սաղմոսներու մեկնութեանն ասորի եւ հայ բնադիրներուն զանազանութիւնը առիթ կու տայ որ մեր թարգմանութեան եւ սրբագրութեան մասին եղած կարծիքները համառօտակի յիշենք:

Հ. Զարհանալեան կը հաւաստէ թէ Սաղմոսները հաւանաբար արդէն թարգմանուած ըլլալուն պատճառով է՝ որ Ս. Մեսրոպ Առակաց գրքէն սկսած է իր

թարգմանութիւնը. եւ իբր հաստատութիւն, օրինակ կը բերէ Փարպեցիի եւ Թովմաս Արծրունիի վկայութիւնները:

Նախ-Սահակեան թարգմանութեան ուրիշ ապացոյց մը կը համարուի Ոսկերեւանի վարքին մէջ յոյն պատմիչին ըսածը՝ թէ Հայերը Ս. Գրքի թարգմանութիւնը սկսան Սաղմոսներէն, սուրբ Հայրապետին յորդորումով, երբ անիկա Փոքր Հայքի մէջ կը գտնուէր, իր աքսորովայրը:

Որքան անստույգ ըլլան այս եւ նման բանի մը յիշատակութիւններ, կարելի չէ, սակայն, այլապէս բացատրել ժամակար-